նուէ հետեւեալ նկարը – արեւի ծագումին և ճառագայթներուն մէջտեղէն՝ հեռուէն սում. գինուորներ՝ փողերով, թմբուկներով և սուիններով. կաղապարը պատրաստեր են։

— Ազգային Սուգի օրերուն, այսուհետեւ պետական պաշտօնատունները իրենց դրօշը կէս պիտի պարզեն։

— Երուսաղէմի Թուրք Քոմիտէն՝ Հայ նահատակաց հողակոյտին վրայ դնելու համար ծաղկեպսակ մը ղրկեր էր Իզմիրլեան Սրբազանին հետ՝ իբր ապացոյց եղբ. սիրոյ և յարգանաց. այդ սգահանդէսը տեղի ունեցեր է Օգոստ. 16 ին. և Իզմիրլեան Արքեպս. ը անձամբ դրեր է ծաղկեպսակը, որ Թուրք լեզուով սա վերտառութիւնը կը կրէ։ «Երուսաղեմի Օսմ. Միութեան և Յառաջադիմութեան ընկերութեան կողմէ նուիրական յիշատակ մը, Կ. Պոլսոյ մէջ 1896 տարւոյն ծանօթ դէպքին ինկած հարստահարեալ ու անմեղ Հայ հայրենակիցներուն»։

— Իրաւամբ մեծ գովեստով կը գնահատուին դարձեալ անձնանուէր զգացումները զոյգ մեծ հերոս – Էնվէր և Նիազի պէյերուն, որոնք հեռագրաւ իմացուցեր են՝ թէ չինուելիք երկու յածանաւերուն համար եղած հանգանակութեան արդիւնքը՝ յատկացուի Ֆաթիհի Հրկիզեալներուն։

## ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Ա. ԳՐԻԳՈՐԵԱՆ. – փտութեան Օճախը կամ Օրմանեանի Պատրիարքութիւնը. (հրտրկ. «Ազգ»ի. թիւ 1. Պոսթոն 1908. գին 25 սէնթ. ճանապարհածախսով՝ 30 սէնթ։

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ. – Ամենապատիւ Տ. Տ. Մատթէոս Ս. Արքեպս. Իզմիրլեան. Բարձրաշնորհ Տ. Եղիշէ Ս. Եպս. Դուրեան (կենսագրութիւն). Պոլիս 1908. գին 2 դրշ.։

Տ. ԶԱՒԷՆ. – Թիւրք Սահմանադրութիւնը և Երիտասարդ Թիւրք կուսակցութիւնները («Երկրի Ձայնի» Գրադարան N. 1). Թիֆլիս 1908. տպ. «Էպօխա». գին 20 կ.։

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ. – Ազատութեան Յաղթանակը. (Յաւելուած «Անահիտ»ի). փարիզ 1908. տպ. Տ. Տօղրամաճեան։

ԼԵՒՈՆ ԼԱՐԵՆՑ. – Դրախտի Երգեր. Թիֆլիս 1908. տպ. Օր. Ն. Աղանեանցի. գին 30 կոպ. – 4 դրշ.։

Ա – Դ-Օ. – Ազատագրական շարժումը Ռուսաստանում իր ծագման առաջին օրերից. Երեւան 1908. տպ. «Լոյս» Արշակ. Յակոբեանցի և Որդիք. գին 80 կ.։

Հ. և Զ. ԱՍԱՏՈՒՐ. – Թանգարան Հատընտիր Հատուածներու Արձակ և Ոտանաւոր. Միջին դասընթացք. Պոլիս 1908. Տպ. Յ. Մատթէոսեան. Հրատ. Նոր Գրատան Ա. Պ. Եազըճեան և ընկ. գին 6. դրշ.։

ՆՈՐ ՓՈՒՆՋ. գրքոյկ ընթերցանութեան պատկերազարդ. Պոլիս 1908. (տպ. և հրտրկ. տես վերը). գին 1 դրշ.։

Գ. ԳԱՎԱՖԵԱՆ. – Տարրական Թուաբանութիւն մտաւոր և Գրաւոր. Ա և Բ Տարի. Պոլիս 1908 (տպ. և հրտր. տես վերը)։

ՔԸՐԸՐ ՊԷԼ. – Ճէյն Էյր. Թրգմ. Մարինոս Հ. Ստամպօլլուեան. Պոլիս 1908 տպ. Յ. Մատթէոսեան. Հատոր Ա. գին 4 դրշ.։

— Հատոր Բ. գին 4 դրշ.։

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԿՐԹԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ. Նոր Ջուղա Սպահան 1908։

ԺԻՒԼ ՎԷՐՆ. Գրանտ Նաւապետի Որդիքը. Մասն Բ. («Պատանեկան Գրադարան N. 10) Պաքու 1908. գին 30 կ.։

## LA COLLECTION KELEKIAN

*Etoffes et Tapis d'Orient et de Venise*

Notice de M. Jules Guiffrey membre de l'Institut Administrateur de la Manufacture National des Gobelins – Cent Planches reproduisant les Pièces les plus remarquables de cette collection décrites et classées Par M. Gaston Migeon – conservateur d'objets d'art du Moyen Age et de la Renaissance au Musée du Louvre.

*Paris Librairie Centrale des Beaux-Arts. Emile Léry, éditeur.*

Այս նշանաւոր Հատորաշէն օրինակ մը նուիրեց մեր Մատենադարանին Վսեմ. Տիգրան Խան Քէլէկեան, որուն հրատարակաւ կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնները։


ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1908 թ.

«ՄԵՐ ՁԱՅՆԸ»

Հասարակական, Գրական եւ Քաղաքական օրաթերթ

Բաժանորդագինն է
Տարեկան 6 ր. – Արտասահման 10 ր.

Գրել

Rédaction du Journal « Mer Dzaïn »

(Russie) NACHITCHEVAN

(Sur Don)


digitised by A.R.A.R.@